# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 121

**ք. Երևան** **15.09.2020թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14-5/18439-20, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.5/7973-2020, ՀՀ էկոնոմիկայի 03/10347-2020 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության և ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության, Քաղաքաշինության կոմիտեի 03/11.2/7227-2020 և Կադաստրի կոմիտեի ԴՍ/4126-2020 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան** համայնքի **Շաղատ բնակավայրի** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Սիսան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության 0.139 հա (կադաստրային ծածկագիր՝ 09-069-0035-0001-ից) այլ հողամասը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ «գյուղատնտեսական արտադրական հողեր» գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Մ. Մկրտչյան

*ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ*

*<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՂԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշման դրույթներով կազմված հողաշինարարական գործի նյութերով՝ նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ բնակավայրում գտնվող 0.139հա հողամասի վրա իրականացնել անասնաշենքի կառուցապատման աշխատանքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անասնաշենքի կառուցումից հետո համայնքում կստեղծվեն նոր, թվով 30 աշխատատեղեր և կկատարվի 144մլն դրամ կապիտալ ներդրումներ՝ ուստի անասնաշենքի կառուցապատման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Շաղատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության 0.139հա հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրականնշանակության օբյեկտների հողեր կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական հողեր գործառնական նշանակությամբ:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

13.10.2020թ.

---

*ՏԵՂԵԿԱՆՔ*

*<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՂԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի հաստատումից հետո համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

13.10.2020թ.

# Հատակագիծ

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաղատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող նպատակային նշանակությունը Բնակավայրերի (գործառնական նշանակությունը այլ հողեր), 0.1390 հա , Արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի (գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների) կատեգորիա փոխադրվող հողամասի

Մ 1:10000

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի
ղեկավար ________ Ա.Սարգսյան
<<____>> ________ 2020թ.




1 փոխադրվող տարածք 0.1390 հա

| Շրջադարձ կետի համար | Կոորդինատներ X | Կոորդինատներ Y | Կողմի երկ. մ |
|---|---|---|---|
| 1 | 8577899.1447 | 4381847.7205 | 29.60 |
| 2 | 8577928.3738 | 4381852.3915 | 46.97 |
| 3 | 8577935.7850 | 4381806.0149 | 29.60 |
| 4 | 8577906.5559 | 4381801.3440 | 46.96 |
| 5 | 8577899.1447 | 4381847.7205 | |

Կատարող ________ Ստորագրություն — Նարեկ Հովհաննիսյան (անուն,ազգանուն) — 22.04.2020թ.

Որակավորման վկայականի 0242 (համարը) — 29.10.2012 (տրման, ամսաթիվ)

Իրավաբանական անձի 8811095561 (պետական գրանցման համարը) — <<Գոլդն Լյուքս>>ՍՊԸ (անվանումը)

________ Ստորագրություն

Կ.Տ.

ГОЛДН ЛЮКС GOLDN LYUQS 09811897